ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2020 թվականի N 2128

ԱՇՈՏ ՄԵՍՐՈՊԻ ԲԱԴԱԼՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գրության համաձայն ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 15.10.2020 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ Աշոտ Մեսրոպի Բադալյանի կողմից «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 15.10.2020 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի համաձայն՝ Աշոտ Մեսրոպի Բադալյանը (հասցե՝ ք. Վանաձոր, Ռուսթավի փ., 14/1տ) Վանաձոր քաղաքի Յուբելյա փողոցի բարձրահարկ շենքի հարավային մասում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա ինքնակամ տեղադրել է մետաղական կարկաս, որը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք է:

2020 թվականի հոկտեմբերի 15-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2020 թվականի հոկտեմբերի 29-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով ծանուցվել և չէր ներկայացել Աշոտ Մեսրոպի Բադալյանը: 20.10.2020 թվականին ուղարկված ծրարի հետադարձ ծանուցումը առկա չէր, որի հիման վրա Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից 02 նոյեմբերի 2020 թվականին ընդունվել է «Աշոտ Մեսրոպի Բադալյանի վերաբերյալ վարչական վարույթը կասեցնելու մասին» թիվ 1976 որոշումը:

Աշոտ Մեսրոպի Բադալյանը որոշման վերաբերյալ իրազեկվել է 18.11.2020 թվականին, որոշումը ուժի մեջ է մտել 19.11.2020 թվականին:

Ուստի Աշոտ Մեսրոպի Բաղալյանի վերաբերյալ 15.10.2020 թվականին հարուցված վարչական վարույթը համարվում է վերսկսված, քանի որ դրա կասեցման հիմք դարձած հանգամանքը վերացել է:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 26.11.2020 թվականին կազմվել է արձանագրություն և զեկուցագիր, որի համաձայն Աշոտ Մեսրոպի Բաղալյանը վերացրել է վարչական իրավախախտումը:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝ անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Այսպիսով, Աշոտ Մեսրոպի Բաղալյանը վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 283-րդ հոդվածով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի ա) կետով, 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ.

1. Աշոտ Մեսրոպի Բաղալյանի վերաբերյալ 15.10.2020 թվականին հարուցված վարչական վարույթը վերսկսել և կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը համարվում է վարչական ակտի հասցեատիրոջը հանձնված (պատշաճ ծանուցված) նաև որոշման մասին ծանուցումն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում (azdarar.am) տեղադրելու օրվան հաջորդող հինգերորդ օրը:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 30
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2020 թվականի N 2129

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1740 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վանաձոր համայնքի ղեկավարի 17 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 1740 որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չի վճարվել, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի ե) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 17 սեպտեմբերի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Բաղրամյան պող. և Տավրոսի 22-րդ փողոցի հատման վայր և Բաղրամյան պող. և Տավրոսի 22-րդ փող. հատման հյուսիս-արևմուտք հասցեներում գտնվող Նարինե Ալեքսեյի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ճշտված սահմանները հաստատելու, հողամասերը որպես մեկ գույքային միավոր միավորելու, հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները հաստատելու, ինքնակամ կառուցված շինությունները օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու և Վանաձոր համայնքի ղեկավարի 21 հունվարի 2020 թվականի թիվ 93 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1740 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 30
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2020 թվականի N 2130

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂ. ԵՎ ՏԱՎՐՈՍԻ 22-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՀԱՏՄԱՆ ՎԱՅՐ ԵՎ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂ. ԵՎ ՏԱՎՐՈՍԻ 22-ՐԴ ՓՈՂ. ՀԱՏՄԱՆ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՈՒՏՔ ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՆԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԵՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՐՊԵՍ ՄԵԿ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ,ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21 ՀՈՒՆՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 93 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարինե Ալեքսեյի Մանուկյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1741323 և թիվ 1740950 վկայականները, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագիծը, ՀՀ Լոռու մարզպետի 21.07.2020թ. թիվ 01/108,3,2/06905-2020 գրությունը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 26.08.2020թ. թիվ ՔՏՄ/09.2.4/10437-20 գրությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, եզրակացությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 29.07.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-109/ 20 Ի եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը դադարեցնելու մասին 29/01/2020թ. թիվ Դ-29012020-06-0007 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերով և 18-րդ կետի գ) ենթակետով, ՀՀ կառավարության 13 ապրիլի 2006թ. թիվ 718-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի բ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պող. և Տավրոսի 22-րդ փողոցի հատման վայր և Բաղրամյան պող և Տավրոսի 22-րդ փող. հատման հյուսիս-արևմուտք հասցեներում գտնվող Նարինե Ալեքսեյի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող միավորված ընդհանուր 0,3795հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

2. Միավորել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պող. և Տավրոսի 22-րդ փողոցի հատման վայր և Բաղրամյան պող. և Տավրոսի 22-րդ փող. հատման հյուսիս-արևմուտք հասցեներում գտնվող Նարինե Ալեքսեյի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող ընդհանուր 0,3795հա մակերեսով հողամասը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված հատակագծի:

3. Հաստատել Վանաձոր քաղաքի Բաղրամյան պող. և Տավրոսի 22-րդ փողոցի հատման վայր և Բաղրամյան պող. և Տավրոսի 22-րդ փող. հատման հյուսիս-արևմուտք հասցեներում գտնվող, Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի համաձայն միավորված ընդհանուր 0,3795հա

մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողեր և գործառնական նշանակությունը՝ որպես արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողեր՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագծի լրամշակման նախագծի:

4. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Բաղրամյան պող. և Տավրոսի 22-րդ փողոցի հատման վայր և Բաղրամյան պող. և Տավրոսի 22-րդ փող. հատման հյուսիս-արևմուտք հասցեներում Նարինե Ալեքսեի Մանուկյանի սեփականության իրավունքով պատկանող միավորված ընդհանուր 0,3795հա մակերեսով հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված արտադրական գործառնական նշանակության 334.95քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 318.15քմ) շինությունները՝ համաձայն հատակագծի:

5. Նարինե Ալեքսեյի Մանուկյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ 334.95քմ ընդհանուր արտաքին մակերեսով շինությունների համար 854130 (ութ հարյուր հիսունչորս հազար հարյուր երեսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

6. Սույն որոշման մեջ նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամաս, 22-րդ փողոց, թիվ 3/2 բետոնե հանգույց:

7. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 21 հունվարի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Բաղրամյան պողոտա և Տավրոս 22 փողոցի հատման վայր և Բաղրամյան պող և Տավրոսի 22-րդ փող. հատման հյուսիս-արևմուտք հասցեներում գտնվող Նարինե Ալեքսեյի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի ճշտված սահմանները հաստատելու, հողամասերը որպես մեկ գույքային միավոր միավորելու և փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 93 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 30
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 նոյեմբերի 2020 թվականի N 2131

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 48/8-4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՏԻԳՐԱՆ ՖՐՈՒՆԶԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Ֆրունզիկի Պետրոսյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23112020-06-0003 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով և 76-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 48/8-4 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին դասվող 20.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23112020-06-0003 վկայականի, կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել Տիգրան Ֆրունզիկի Պետրոսյանին՝ ավտոտնակ տեղադրելու նպատակով:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Տիգրան Պետրոսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20.0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար ամսական վճարը սահմանելով 24 (քսանչորս) ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. նոյեմբերի 30
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2020 թվականի N 2132

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉԵՐՆԻՇԵՎՍԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԼԱՆՅԱ ՍԱՄԱՐՑՈՎԻ ՄԱՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մելանյա Սամարցովի Մամյանի (ծնված՝ 08.01.1956թ.) լիազորված անձ Գագիկ Սերյոժայի Ջանազյանի (ծնված՝ 15.08.1980թ.) դիմումը, 20.03.2020թ. տրված թիվ 1241 (նոտարական ակտի կոդ: 763-20200320-79-4525230) լիազորագիրը, 24.06.1986թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական պասպորտը, 11.03.2020թ. ըստ կտակի ժառանգության իրավունքի թիվ 1074 (նոտարական ակտի կոդ: 763-20200307-84-4505145) վկայագիրը, 25.07.2016թ. տրված թիվ ԱԲ 257021 մահվան վկայականը,ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, մասնագիտական եզրակացությունը, 23.09.2020թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-135/20 Ի եզրակացությունը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Չերնիշևսկու փողոցի թիվ 6 հասցեում կառուցված բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ օրինական 498.10քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1939-1990թ.թ. և դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 498.10քմ:Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Մելանյա Սամարցովի Մամյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Չերնիշևսկու փողոցի թիվ 6 հասցեում գտնվող օրինական 498.10քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Հաստատել Վանաձոր քաղաքի Չերնիշևսկու փողոցի թիվ 6 հասցեում գտնվող բնակելի տան փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Չերնիշևսկու փողոց, թիվ 6 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2020 թվականի N 2133

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 82 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հաստատված եռամսյակային բաշխումները և հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ. ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի հունվարի 20-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 82 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2020 թվականի N 2134

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԲԱՆԱԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՂԱՎԱՐԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՊԱՊ ԵՎ ԴԱՎԻԹ» ՍՊԸ-ի տնօրեն Վահագն Սաքանյանի դիմումը, անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1991468 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Բանակի փողոց թիվ 2բ հասցեում գտնվող տաղավարին տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Բանակի փողոց, թիվ 2-2/1 տաղավար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2020 թվականի N 2135

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԻՍԱԿՈՎԻ ՓՈՂՈՑ (ՆԱԽԿԻՆ ՁԵՐԺԻՆՍԿՈՒ) ԹԻՎ 35 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԱՈՒՐԱ ՍԱՄՎԵԼԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լաուրա Սամվելի Սահակյանի (ծնված՝ 30.06.1947թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 28.02.1987թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը, 18.09.2020թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 1883 (նոտարական ակտի կոդ: 775-20200918-84-4725460) վկայագիրը (լրացուցիչ), «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 19.11.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-163/20 Ի եզրակացությունը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Իսակովի փողոց (նախկին Ձերժինսկու) թիվ 35 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 423.6քմ մակերեսով հողամասը, դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1958-1985թ.թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 423.6քմ:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի դ) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Լաուրա Սամվելի Սահակյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Իսակովի փողոց (նախկին Ձերժինսկու) թիվ 35 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 423.6քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Իսակովի փողոց (նախկին Ձերժինսկու) թիվ 35 հասցեի բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Իսակովի փողոց, թիվ 35/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՍԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2020 թվականի N 2136

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1643 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արտյոմ Արտավազդի Աբովյանի դիմումը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 24/09/2020թ. թիվ Կ-24092020-06-0063 որոշումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 02 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 1643 որոշումը, ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱՁ-ի կողմից տրված նոր հատակագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնքի ղեկավարի 02 սեպտեմբերի 2020 թվականի «Վանաձոր քաղաքի Սովետական Բանակի փողոց թիվ 24 հասցեի բնակելի տան ու հողամասի նկատմամբ Արտյոմ Արտավազդի Աբովյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 1643 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1. Որոշման նախաբանը «սեփականության վկայագիրը» բառերից հետո լրացնել «15.06.1992թ. տրված անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը» բառերով:

2. Որոշման նախաբանում «օրինական 256.8քմ» բառերը փոխարինել «օրինական 257.08քմ» բառերով:

3. Որոշման նախաբանում «256.8քմ» բառերը փոխարինել «257.08քմ (253.16+7.84:2): 7.84քմ մակերեսով հողամասը գտնվում է ընդհանուր օգտագործման տակ երկու կից տնատիրությունների՝ Արտյոմ Աբովյանի և Հրայր Աբովյանի միջև: Արտյոմ Աբովյանի բաժնեմասը կազմում է 257.08քմ (253.16+7.84:2):» բառերով:

4. Որոշման նախաբանը «ղեկավարվելով» բառից հետո լրացնել «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով,» բառերով:

5. Որոշման 1-ին կետը «256.8քմ» բառերը փոխարինել «257.08քմ (253.16+7.84:2)» բառերով:

6. Վանաձոր համայնքի ղեկավարի 02 սեպտեմբերի 2020 թվականի թիվ 1643 որոշման հատակագիծը փոխարինել համայնքի ղեկավարի կողմից հաստատված նոր հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2020 թվականի N 2137

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ԹԱՂԱՄԱՍ ՔՇՀ-7 ԹԻՎ 6/18-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՐՄԵՆ ՎԱՉԱԳԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Վաչագանի Խաչատրյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23112020-06-0006 վկայականը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 34.2-րդ կետով և 35-րդ կետի դ) և ե) ենթակետերով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Տարոն-2 թաղամաս ՔՇՀ-7 թիվ 6/18-1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 38.94քմ մակերեսով ավտոտնակը 66200 (վաթսունվեց հազար երկու հարյուր) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ 87.21քմ մակերեսով հողամասը 166920 (հարյուր վաթսունվեց հազար ինը հարյուր քսան) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Արմեն Վաչագանի Խաչատրյանին:

2. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Արմեն Խաչատրյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ավտոտնակի և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 01
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 դեկտեմբերի 2020 թվականի N 2138

ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՀԱԿՈԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 73 (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՇԻՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱՐ ԳԵՎՈՐԳԻ ՄՈՒՍԱԵԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հեղինար Գևորգի Մուսաելյանի (ծնված՝ 02.03.1961թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, Բաժանորդի էպիկրիզը, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 24.11.2020թ. թիվ 2659 (նոտարական ակտի կոդ: 741-20201124-88-4812103) հայտարարությունը, 09.09.2020թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ1-121/20 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Հակոբյան փողոցի թիվ 73 (պայմանական) հասցեի արևմտյան մասում գտնվող բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 395.0քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1999թ., դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 395.0քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1999թ.-ից:
Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի ա) ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Հեղինար Գևորգի Մուսաելյանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Հակոբյան փողոցի թիվ 73 (պայմանական) հասցեի արևմտյան մասում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 395.0քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3.Վանաձոր քաղաքի Հակոբյան փողոցի թիվ 73 (պայմանական) հասցեի արևմտյան մասում գտնվող բնակելի տանը տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Հակոբյան փողոց, թիվ 73-5/8 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 02
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2020 թվականի N 2139

ՎԱՆԱՁՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ՀՈՒՆՎԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անուշ Վոլոդյայի Նահապետյանի 15.09.2020 թվականի թիվ 067/4924 դիմումը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 10 հունվարի 2014 թվականի «Անուշ Վոլոդյայի Նահապետյանին բնակարան հատկացնելու մասին» թիվ 10-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Անուշ Վոլոդյայի Նահապետյանին, Սյուզաննա Լյովայի Նահապետյանին և Գոռ Սամվելի Ղազարյանին բնակարան հատկացնելու մասին»:

2. Որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի բնակարանային տնտեսության և համատիրությունները համակարգող բաժնի գլխավոր մասնագետ Քաջիկ Թադևոսյանին՝ Անուշ Վոլոդյայի Նահապետյանի, Սյուզաննա Լյովայի Նահապետյանի և Գոռ Սամվելի Ղազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 10 (տասը) տարի ժամկետով կնքել բնակարանի վարձակալության պայմանագիր:»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2020 թվականի N 2140

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Գնումների մասին» ՀՀ օրենքով,ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի IV բաժնի 18-րդ մասով՝ ***որոշում եմ.***

Հաստատել Վանաձոր համայնքի 2021 թվականի գնումների նախնական պլանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 դեկտեմբերի 2020 թվականի N 2141

ԱՐՓԵՆԻԿ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուդիկ Ալբերտի Գևորգյանի դիմումը մոր՝ Արփենիկ Վաղարշակի Խաչատրյանի նկատմամբ պատրոնաժ սահմանելու մասին, Արփենիկ Խաչատրյանի համաձայնությունը, Վանաձորի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 6-ին տրված դրական եզրակացությունը (արձանագրություն թիվ 15, կետ 3) և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր քաղաքի Գրիբոյեդովի փողոցի թիվ 2 շենքի 36 բնակարանի բնակիչ Ռուդիկ Ալբերտի Գևորգյանին (ծնված՝ 12.03.1977թ., անձնագիր՝ AS 0555478, տրված՝ 01.04.2019թ., 066-ի կողմից) նշանակել համատեղ բնակվող մոր՝ Արփենիկ Վաղարշակի Խաչատրյանի (ծնված՝ 08.07.1950թ., անձնագիր՝ AM 0326296, տրված՝ 06.06.2011թ., 066-ի կողմից) նկատմամբ պատրոն (օգնական):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 03
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 դեկտեմբերի 2020 թվականի N 2142

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի տարածքում գտնվող չորացած, գերհասուն, սանիտարական նորմերին չհամապատասխանող, հատման ենթակա ծառերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 27.11.2020 թվականին կազմված արձանագրությունները, «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ Հայկ Համբարձումյանի 27.11.2020 թվականի թիվ 03Ա/79, 03Ա/80, 03Ա/81, 03Ա/82 և 03Ա/83 զեկուցագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 51-րդ հոդվածով, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Տալ թույլտվություն Վանաձոր համայնքի Կնունյանց 2/3 բնակարանի բնակիչ Ալլա Վելեգանի հարազատների գերեզմանին կից ուռենու, թիվ 24 միջնակարգ դպրոցի շինության պատերը խարխլող 18/տասնութ/ ծառերի, «Սայաթ Նովայի» անվան այգում առկա 3/երեք/ չորացած եղևնիների, Մխիթար Գոշի 7/39 բնակարանի բնակիչ Դավիթ Փարեմուզյանի ավտոտնակին կից և շինությանը վտանգ ներկայացնող 1/մեկ/ ծառի, Բանակի և Աբովյան փողոցների հատման հատվածից դեպի վերև, ձախ մայթի երկրորդ ծառի հատման համար:

2. «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ին իրականացնել վերոնշյալ ծառերի հատման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄԻԿՈՆ ԱՍԼԱՆՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 04
ք.Վանաձոր